

րուք դէմ ընդդէմ հարկանելով եւ կամ ծափս հարկանելով զմեռեալսն յուղարկէին» (Վեներաբիկ 1832, էջ 229) : Ինչպէս որ Հոմերոսի օրով յոյներն իրենց հերոսներուն զխակին շուրջ պատերազմ կը ձեւացնէին, այդպէս նաեւ՝ Մովսէս Խորենացւոյ համաձայն՝ Արտաշէս թագաւորի «զգահոյութիւն շուրջ (կային) . . . պաշտօնէիցն զինուորութիւնը եւ նահապետքն եւ նախարարութեանցն գունդք եւ միանգամայն զօրականացն վաշտք, ամենեքին կազմեալ զինու հանդերձ, իբր թէ ի պատերազմ ճակատիցին. եւ առաջի պղնձիս հարկանելով փողս, եւ զկնիսն ձայնարկու կուսանք սեւազգեստք եւ աշխարող կանայք, եւ զհետ՝ բազմութիւն ոսմկին . . . եւ շուրջ զգերագմանան լինէին կամաւոր մահունք» (Վեներաբիկ 1827, էջ 284) :

Թէեւ Frazerի գրութիւնը ունի շատ վիճելի կէտեր եւ այս պատճառով կը պահանջուի ընթերցողէն զգուշութիւն, բայց նկատելով նիւթերը զորոնք ո՛չ մէկ ուրիշ հեղինակ այսպիսի առատութեամբ կը բացատրէ մինչեւ հիմայ համադրել, ջերմապէս կը յանձնարարենք զայն : Ան որ կ'ուզէ ժողովրդական հաւատքն ուսումնասիրել, պէտք ունի Frazerի գրութեան, որ աշխատանքներուն ստուար մէկ մասը պիտի զեղչէ :

Հ. Ա. ԳԱՐԱՄԱՆԵԱՆ

Վասպուրական, Վան-Վասպուրականի ապրիլեան հերոսամարտի տասնեւիւնգամեակի առթիւ. 1915—1930. Վեներաբիկ 1930, մեծ 8<sup>0</sup>, էջ 416: Գիւն 2 տուրք :

Գեղեցիկ Վասպուրական աշխարհին տենչը՝ թաւրիգարնակ տարազիւր Վասպուրականցիներու սրտին մէջ զազափար մը կը զարթուցանէ՝ իրենց հայրենիքին անգին յուշերը հատորով մ'անմահացնել : Չանազան նիւթական եւ այլ դժուարութիւններ 5 տարի կը յամեցնեն զորքին հրատարակութիւնը, որ վերջապէս 1930ին լոյս կը տեսնէ :

Վասպուրականի հայրենակցական Միութեան վարչութիւնը, որ միաժամանակ խմբագրական եւ հրատարակիչ մարմինն է, գրքին սկիզբը կը պարզէ առաջակայ ձեռնարկին նպատակը : Դիտուած է պատկերացնել՝ «Վան-Վասպուրականի պատմական, գրական, կրթական, հասարակական եւ յե-

ղատիսական-ազատագրական շարժումներու ամբողջական պատմութիւնը» (էջ 6) : Պատահամբ կ'ընդարձակի այդ սահմանափակ հորիզոնը մինչեւ Տարօն ու Կիլիկիա, ուղելով միասնական պատկեր մը տալ 1915 թուի հայկ. հերոսամարտերու : Ծրագրին մէջ, որչափ կ'երեւայ ծանրակշիռ համարուած է հրատարակել առանց կուսակցական խտրութեան, ամբողջական ցանկը ազգային գործիչներու, որոնք վերածնունդի արշալոյսէն ի վեր կենդանական Հայաստանի մէջ քաղաքական կամ կրթական գործունէութիւն մը ցոյց տուած են : Այս գաղափարը նորութիւն մըն է նոյն կարգի հրատարակութիւններու մէջ եւ անտարակոյս մեծ ծննդաբերութիւն պիտի մատուցանէ բոլոր հայրենասէրներու՝ մեր ազգային անձնաւորութիւնները մօտէն ճանչնալու համար :

Նիւթերու բազմապիսութեան համեմատ ամբողջ գործքը նպատակայարմար կերպով կը բաժնուի բազմաթիւ աշխատակիցներու միջեւ, որոնք հեռաւոր տեղերէ կը մասնակցին գրքին յառաջագայութեան : Առ հասարակ հեղինակները իրենց նիւթին հետ անմիջական կապ ունեցած են. կամ կը ներկայացնեն հերոսամարտ մը, ուր իրենք ալ կուտած են, կամ կրթական շարժում մը որուն մասնակցած են. ասով միշտ շահեկան նորութիւն մ'ունին մեզի հաղորդելու :

Առանց մանրամասնութեան իջնալու տանք քանի մը խօսքով գրքին բովանդակութիւնը : Չիթունիի «Վասպուրական» մեր աշխարհէն ետք կը նկարագրուի Վասպուրականի նախապատերազմեան վիճակը, տնտեսական, կրթական, քաղաքական. յետոյ հերոսամարտերը Վանի, Փէսանդաշտի, Շատախի, հարաւ-արեւմտեան գաւառներուն եւն մէջ մանրամասնաբար. համառօտ կը պատմուին քիչ ետք Մուշի, Սասունի, Սուեւիայի եւն հերոսամարտերը : Կ'ապրինք Վանի հայկ. ժամանակաւոր իշխանութեան զեղեցիկ օրերը, կը տեսնենք նորակազմիկ պետութեան գործունէութիւնը կարճատեւ ժամանակի մէջ. ու ազատութեան այդ ուրախ օրերէն ետք Վանեցւոյն հետ կը փոխադրուինք Կովկաս իբր կամաւոր տարազիւր՝ ազգային յարկի տակ. յետոյ դարձեալ ներգաղթ մը մասնական, ու վերջապէս կը տեսնենք Վասպուրականցիներու հալածական փախուստը դէպի օտար երկիր :

Առանձին գլուխներ կը կազմեն Մ. Փորթուգալեանի գործունէութիւնն Վանի մէջ, Վասպուրականի մտաւոր զարթումը, նոյն նահանգին աշխարհագրական նպաստաւոր դիպքը Հայերու համար, հայ յեղափոխութիւնը եւ մասնաւորապէս Բուրսերու հետ զինակցութեան խնդիրը եւն եւն : Վերջապէս «Յեղափոխական Վասպուրական» անուան տակ ընդարձակ հատուած մը կու գայ Հայկ Աճէմեանի գրչէն (էջ 241—407), ուր հին եւ նոր յեղափոխական դէմքերու համառօտ կենսագրութիւնը կը դժուի, այրուրենական կարգով գաւառ առ գաւառ : Հետեւեալ տեղերը նկատի առնուած են՝ Վան (քաղաք ու արուարձաններ), Հայոց Չոր, Ռշտունիք, Կարճկան, Կարկառ, Սպարկերտ, Խիզան, Մոկս, Ողիմ, Շատախ, Նորդուզ, Ալրակ, Արճակ-Սարա, Թիմար, Արաղա, Արճէշ եւ Ալջաւազ գաւառները :

Հետաքրքրական է մեզի համար Վասպուրականն իւր բովանդակութեամբ. մարտաշունչ լեզուով գրաւելի ու ոգեւորելի է, նիւթերու պէսալիսութեամբ հաճոյական է ընթերցումը : Բազմալի էր սակայն դէպքերու մանրամասնութեամբ՝ գրքին սկիզբը մէկ գլխի տակ տեսնել. ասով պիտի դիւրանար ընթերցողին պատկերացումը պատմութեան միասնականութեան : Այնչափ աւելի զգալի է այս պէտքը քանի զանազան աշխատակիցներ մասամբ նոյն նիւթերը կը շօշափեն :

Վասպուրականի առաւելութիւններէն մէկն է լուսանկարներու ճիշտութիւնը որոնք մեծ մասով նոյն հերոսամարտներու դէմքերէն ու տեսարաններէն կը ցուցադրեն մեզի : Աշխարհագրական ուղղութեան համար պակաս չեն նաեւ գրքին մէջ նահանգի քարտէսներ ու քաղաքներու յատակագիծեր : Տպագրութիւնը անբասիր է :

Այս բոլոր առաւելութիւններով օժտուած Վասպուրականն արժանի է իւր վայելուչ տեղը գրաւելու գրադարաններու մէջ ու ժողովրդեան ձեռքը, եւ զրգիւր ըլլալու որ իւր դամբանները յառնեն հայկական միւս նահանգներու համար :

H. A. WINKLER. Salomo und die Karina. Eine orientalische Legende von der Bezwingung einer Kindbeddämonin durch einen heiligen Helden. (Veröffentlichungen des orientalischen Seminars der Universität Tübingen. Abhandlungen zur orientalischen Philologie und zur allgemeinen Religionsgeschichte. 4. Heft.) Verlag von W. Kohlhammer, Stuttgart, 1931, 8°, XI+209. RM 10.80.

Ազգերու ժողովրդական հաւատքին մէջ բաւական կարեւոր դեր խաղացող նիւթ մը կ'ուսումնասիրէ Վինկլէր իր այս գեղեցիկ գրութեամբ. ծննդականը շրջապատող պաշտօնական ոգիներն եւ անոնց հակառակորդ թշնամի ոգիներն՝ իրենց յարակից հաւատալիքներով : Հաւատալիքս շատ ազգերու քով երեւան կու գայ. այս պատճառաւ ալ կ'արժէր զայն առանձին ուսումնասիրութեան մը նիւթ ընել : Ուրախութեամբ կ'ողջունենք Վինկլէրի երկը, որ յիշուած հարցը բազմակողմանի տեսարաններով եւ գոհացուցիչ կերպով կ'ուսումնասիրէ : Գործը ո՛չ միայն նիւթի լայն հանասութիւն մ'ունի, այլ եւ իր համեմատութիւններն եւ տուած մեկնութիւնները գրեթէ միշտ յաջող են : Այս վերջին պարագան հազուադէպ առաւելութիւն մըն է, որ բազմաթիւ կրօնախոյզներու եւ ազգախօսներու կը պակսի :

Հեղինակին ելակէան արարներու հաւատալիքն է եղած, ուր Սողոմոն կը պաշտպանէ ծննդականը շար ոգւոյ մը դէմ, որ ստորորար իբր կին կը մտածուի եւ կարինա անունը կը կրէ : Ասկից նաեւ գրութեանս տիտղոսը՝ «Salomo und die Karina» : Վինկլէր արարական աւանդութեան այլ եւ այլ տարբարակներու աւանդութեան այլ (էջ 3—36), անոնց բերակները տալէ յետոյ (էջ 36—39) եւ սպա հարգութիւնը կ'ընէ (էջ 36—39) եւ սպա հարգին մանրամասնութիւններուն միջամուխ կ'ըլլայ (39—91), միայն իրաւական ազբիւրներու վրայ հիմնուած : Ոչ-իսլամ ազգերու հաւատալիքները մեզի բազմաթիւ գերու հաւատալիքներ կ'ընծայեն (94—122), որոնց մէջ կը յիշուին նաեւ հայկական աւանդութիւնները, քաղուած Հ. Ալիշանի, Անանի-թիւնները, քաղուած Մ. Չերազի գրուկեանի, Արեղեանի եւ Մ. Չերազի գրութիւններէն : Ապա Վինկլէր աւանդութեան ազբիւրներու հետազոտութեան կը ձեռնարկէ եւ ամբողջ խնդրի մասին կատարուած քննութիւններուն պատմական ընթացքը կը գծէ մեր առջեւ (122—127) : Կ'ենթադրենք որ յաջորդ էջերը (127—188) հեղինակին ամէ-

\* Պ. Ե.